ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/06Դ-1 ծածկագրով
Գնանշման հարցման մրցույթի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ և ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ (ԴԵՂԱՏՈՄՍԵՐՈՎ) ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 22

ք.Արմավիր 30.12. 2020 թ.

«Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմավիրի առողջության կենտրոն» ՓԲԸ –ը, ի դեմս տնօրեն՝ Լևոն Հայրիյանի, որը գործում է«Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմավիրի առողջության կենտրոն» ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից,, և Ա/ձ ,,Մարինե Խաչատրյան,, ի դեմս տնօրեն Մարինե Խաչատրյանի, որը գործում է Ա/ձ ,,Մարինե Խաչատրյան,, -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ ,Վաճառող՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1 380638** (մեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար վեց հարյուր երեսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրությունե բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[24]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել

ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի ,բե պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[25]

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն ՓԲԸ ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ, Մ. Նիկողոսյան 12	ԱՁ <<Մարինե Խաչատրյան>> ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ, ՎՏԲ Հայաստան բանկ,,ՓԲԸ Արտաշատի մ/ճ

093909214
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Արարատի մ/ճ 11500604222600
ՀՎՀՀ 04101356

Տնօրեն՝ Լ. Հայրիյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հ/Հ 16010020904000

ՀՎՀՀ 46440361

Տնօրեն՝ Մ. Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N
ԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/06
Գնանշման հարցման հրավեր n
N 22 30.12.2020թ. կնքված պայմանագր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համար	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	Ապրանքի տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	ՀՀ դրամ մատակարարման հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	33631380	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ)		Միդոկալմ150 մգ(30/3x10/) Բլիստերում դեղահատեր թաղանթապատ	հատ	177.0	8850	50	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ գ. Մ.Նիկողոսյան 12	50	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում

2	33631380	տոլպերիզոն (տոլպերիզոնի հիդրոքլորիդ), լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)		Միդոկալմ, լուծույթ ներարկման 100մգ/մլ+2,5մգ/մլ; (5) ամպուլներ 1մլ	հատ	1307.0	39210	30	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	30	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում
3	33651112	Ամօքսիցիլին (ամօքսիցիլինի տրիհիդրատ), քլավուլանաթթու (կալիումի քլավուլանատ)		Ամոքսիկլավ 156մգ/25մլ, դեղափոշի ապակե 22հկում 100մլ դեղակախույթի համար և չափիչ գդալ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի	հատ	1270.0	25400	20	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	20	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում
4	33661121	Ացետիլսալիցիլաթթու		Ասպիրին կարդիո 100մգ(28/2x14/) բլիստերում դեղահատեր աղելույծ թաղանթապատ	հատ	58.0	23200	400	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	400	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում

5	33651118	Ցեֆտրիաքսոն (ցեֆտրիաքսոն նատրիում)		Ցեֆտրիակսոն 0.5գ 500մգ; (1) ապակե սրվակ դեղափոշի մ/մ և ն/ե ներարկման լուծույթի	հատ	280.0	28000	100	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	100	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
7	33691188	Էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ		Մեքսիդոլ 5% 10մգ/2մլ *50մգ/մլ; (10/2x5/)* ամպուլներ 2մլ բլիստերում լուծույթ ն/ե և մ/մ ներարկման	հատ	600.0	30000	50	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	50	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
8	33621520	Էնալապրիլ (էնալապրիլի մալեատ)		Բերլիպրիլ դեղահատեր 20մգ; (30/3x10/) բլիստերում	հատ	87.0	8700	100	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	100	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

9	33611360	Կալցիում(կալցիում կարբոնատ), քոլեկալցիֆերոլ		Կալցի D3 500/400 500մգ+5մկգ(200ՄՄ); (20), (50), (100) պլաստիկե տարայում դեղահատեր ծամելու	հատ	62.0	18600	300	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկորոյան 12	300	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
10	33611290	Գլիմեպիրիդ		Ամարիլ 4մգ (30/2x15/) բլիստերում դեղահատեր	հատ	153.3	110400	720	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկորոյան 12	720	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
11	33642230	Լևոթիրոքսին նատրիում		Թիրոկսին 100մգ 100մկգ; (50/2x25/) բլիստերում, (100/4x25/) բլիստերում դեղահատեր	հատ	18.4	16560	900	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկորոյան 12	900	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

12	33691191	Ֆոսֆոլիպիդներ (էսենցիալ)-ԷՖԼ		Էսենցիալ Н 50մգ/մլ; (5) ամպուլներ 5մլ լուծույթ ն/ե ներարկման	հատ	1300.0	26000	20	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	20	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
13	33661163	Դինատրիումի ադենոզին տրիֆոսֆատի տրիհիդրատ, կոկարբոքսիլազ, ցիանոկոբալամին, նիկոտինամիդ		Կոկար բևիտ 2մլ ամպուլաներ, լուծույթ ներարկման	հատ	2600.0	52000	20	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	20	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
14	33651110	Ամպիցիլին (ամպիցիլին նատրիում)		Ամպիցիլին 500մգ; (40) ապակե սրվակ դեղափոշի ներարկման լուծույթի	հատ	210.0	10500	50	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	50	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

15	33631290	Իբուպրոֆեն		Իբուֆեն 20մգ/մլ; 100մլ ապակե շշիկ և չափիչ բաժակ դեղակախույթ ներքին ընդունման	հատ	1780.0	35600	20	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	20	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում
16	33671125	Ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ)		Ամբրոգեքսալ 3մգ/մլ;100մլ ապակե շշիկ և չափիչ գդալ օշարակ	հատ	1900.0	57000	30	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	30	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում
17	33611440	Վիտամին A, վիտամին D3, վիտամին B2, վիտամին B6, վիտամին B1, վիտամին B12, վիտամին C, վիտամին PP, D-պանթենոլ		Պիկովիտ օշարակ 900ՄՄ/5մլ+100ՄՄ/5մլ+1մգ/5մլ+0,6մգ/5մլ+1մգ/5մլ+1մկգ/5մլ+50մգ/5մլ+5մգ/5մլ+2մգ/5մլ; 150մլ ապակե շշիկ և չափիչ գդալ 5մլ	հատ	2340.0	58500	25	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	25	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում

18	33621210	Երկաթի (III) հիդրօքսիդի և պոլիմալտոզի համալիր		Ֆերում-Լեկ 50մգ/5մլ; 100մլ ապակե շշիկ և չափիչ գդալ օշարակ	հատ	1841.0	36820	20	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	20	Դեղօրայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
19	33621310	Տրիմետազիդին (տրիմետազիդինի դիհիդրոքլորիդ)		Պրեդուկտալ ՄՌ 35մգ; (60/2x30/) բլիստերում դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ թաղանթապատ	հատ	128.0	76800	600	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	600	Դեղօրայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
20	33621720	Բիսոպրոլոլ (բիսոպրոլոլի ֆումարատ)		Կոնկոր 5մգ; (30/3x10/), (30/1x30/), (50/5x10/), (50/2x25/) բլիստերում դեղահատեր թաղանթապատ	հատ	79.0	39500	500	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	500	Դեղօրայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

21	33671113	Սալբուտամոլ (սալբուտամոլ) ի սուլֆատ		Սալբուտամոլ 2մգ; (24/1x24/) Բիսուեերում դեղահատեր	հատ	17.6	880	50	մմ Նիկիտոսյան 12 Ս.Նիկիտոսյան փ.Նիշամ գ.Նիշամ մմ Նիկիտոսյան 12	50
22	33631480	Քոնդրոիտինի սուլֆատ (քոնդրոիտին սուլֆատի նատրիում)		Քոնդրոքսին 50մգ/գ; 30գ սալուտինի կամ տալամինի արտաքին կիրառման	հատ	4500.0	18000	4	մմ Նիկիտոսյան 12 Ս.Նիկիտոսյան փ.Նիշամ գ.Նիշամ մմ Նիկիտոսյան 12	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրում ը կատարվում է „Արմա2 ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրա ծ անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում 4
23	33631300	Կետոպրոֆեն		Կետոնալ 50մգ/գ; 30գ սալուտինե պարկուշ, երբաքուրդ արտաքին կիրառման	հատ	2499.9	10000	4	մմ Նիկիտոսյան 12 Ս.Նիկիտոսյան փ.Նիշամ գ.Նիշամ մմ Նիկիտոսյան 12	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրում ը կատարվում է „Արմա2 ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրա ծ անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում 4

24	33671116	Քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ)		Օտրիվին 0.05% 10մլ0,5մգ/մլ; 10մլ պլաստիկե տարա քթակաթիլներ	հատ	2350.0	11750	5	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ 2 փ. Մ.Նիկորոյան 12	5	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում
25	33691140	Ացետիլցիստեին		Ացց լոնգ 600մգ; (10) պլաստիկե տարայում դեղահատեր դյուրալույծ	հատ	380.0	19000	50	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ 2 փ. Մ.Նիկորոյան 12	50	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում
26	33611360	Վիտամին A, վիտամին D3		Վիտամին D3 20000ՄՄ/մլ+10000ՄՄ/մլ; 10մլ ապակե շշիկ-կաթոցիկ, կաթիլներ ներքին ընդունման	հատ	3280.0	196800	60	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ 2 փ. Մ.Նիկորոյան 12	60	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին առնվազը 2(երկու) օրվա ընթացքում

27	33611150	Սիմետիկոն		Էսպումիզան *40մգ/մլ; 30մլ ապակե սրվակ-կաթոցիկ կիթ ներքին ընդունման*	հատ	2800.0	112000	40	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	40	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
28	33691213	Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ (Lactobacillus acidophilus, Bifidobacterium infantis, Enterococcus faecium)		Լինեքս 1,2x10^7; (16/2x8/) Բլիստերում, դեղապատիճներ կոշտ	հատ	210.0	21000	100	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	100	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
29	33651128	Նիտրոֆուրազոն, ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ)		Օտոբալգին ականջակաթիլներ 5մլ 2մգ/գ+70մգ/գ+25մգ/գ; 5գ պլաստիկե շշիկ, 15գ պլաստիկե շշիկ	հատ	430.1	2150	5	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	5	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

30	33651145	Նեոմիցին (նեոմիցինի սուլֆատ), պոլիմիքսին Բ(պոլիմիքսին Բ սուլֆատ), դեքսամեթազոն (դեքսամեթազոն նատրիում մետասուլֆոբենզոատ)		Պոլիդեքսա 1գ(650000 ԱՄ)/100մլ+1000000ԱՄ/100մլ+0.1գ/100մլ; 10.5մլ 22հիկ-կաթոցիկ ականջակաթիլներ	հատ	3400.0	17000	5	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկոդոսյան 12	5	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
31	33671128	Բաղեղի տերևների փոշու հանուկ		Լինկաս 35մգ/5մլ; 90մլ ապակե 22հիկ և չափիչ բաժակ, 120մլ ապակե 22հիկ և չափիչ բաժակ, 150մլ ապակե 22հիկ և չափիչ բաժակ օշարակ առանց շաքարի	հատ	1800.0	18000	10	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկոդոսյան 12	10	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
32	33611150	Պանկրեատին (լիպազ 10000ԵՖՄ, ամիլազ 8000 ԵՖՄ, պրոտեազ 600 ԵՖՄ)		Կրեոն 10000 150մգ (20/2x10/), բլիստերում և (20) պլաստիկե տարայում դեղապատիճներ աղելույծ	հատ	165.0	4950	30	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկոդոսյան 12	30	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

33	33621740	Ամլոդիպին (ամլոդիպինի բեզիլատ)		Նորմոդիպին 5մգ; (30/3x10/), բլիստերում դեղահատեր	հատ	160.0	19200	120	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	120	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
34	33651116	Ցեֆազոլին		Ցեֆազոլին 1000մգ; (10) ապակե սրվակներ դեղափոշի ներարկման լուծույթի	հատ	280.0	5600	20	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	20	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
35	33631470	Բետամեթազոն (բետամեթազոնի դիպրոպիոնատ), կլոտրիմազոլ, գենտամիցին (գենտամիցինի սուլֆատ)		Տրիդերմ 0,5մգ/գ+10մգ/գ+1մգ/գ; 15գ ալյումինե պարկուճ, քսուք	հատ	3650.0	10950	3	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	3	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

36	33651111	Ամոքսիցիլին		Ամոքսիցիլին 250մգ/5մլ; 40գ գրանուլներ 100մլ ապակե սրվակում և չափիչ գդալ 5մլ, գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի	հատ	1330.0	26600	20	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Ս.Նիկողոսյան 12	20	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
37	33691213	Սախարոմիցետ բուլարդի լիոֆիլացված բջիջներ		*Էնտերոլ 250մգ; (10) ապակե շշիկում, դեղապատիճներ*	հատ	370.0	18500	50	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Ս.Նիկողոսյան 12	50	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
38	33631470	Բաղեղ սովորական		*Պրոսպան օշարակ 7մգ/մլ; 100մլ ապակե սրվակ և չափիչ բաժակ, օշարակ*	հատ	3160.0	31600	10	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Ս.Նիկողոսյան 12	10	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

39	33611470	պանտոպրազոլ (պանտոպրազոլ նատրիումի սեսկվիհիդրատ)		Նոլպազա, դեղահատեր աղելույծ 40մգ; (14/1x14/) բլիստերում, (28/2x14/) բլիստերում	հատ	203.0	20300	100	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	100	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
40	33621420	ատորվաստատին (ատորվաստատին կալցիում)		Ատորիս, դեղահատեր թաղանթապատ 40մգ; (30/3x10/) բլիստերում	հատ	285.0	57000	200	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	200	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
41	33691192	լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ), քլորհեքսիդին (քլորհեքսիդինի դիգլյուկոնատ), թիրոթրիցին		Տրախիսան, Լոզաններ,1մգ+1մգ+0.5մգ; (20/2x10/) բլիստերում	հատ	135.0	13500	100	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	100	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է „Արմաշ ԱԿ„-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

42	33611450	բիսմութի տրիկալիումա կան դիցիտրատ (բիսմութի օքսիդ)		Ուլկավիս, դեղահատեր թաղանթապատ 120մգ; (28/2x14/), (56/4x14/) բլիստերում	հատ	63.0	12600	200	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	200	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
43	33691218	մագնեզիում ասպարտատ (մագնեզիում ասպարտատի տետրահիդրատ), կալիում ասպարտատ (կալիում ասպարտատի հեմիհիդրատ)		Ղանանգին, դեղահատեր թաղանթապատ 140մգ+158մգ; (50) պլաստիկե տարայում	հատ	45.0	22500	500	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	500	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*
44	33691136	նատրիումի քլորիդ		լուծույթ կաթիլաներարկման 9մգ/մլ; 100մլ, պլաստիկե փաթեթ	հատ	400.0	8000	20	ՀՀ Արարատի մարզ գ.Արմաշ փ. Մ.Նիկողոսյան 12	20	Դեղորայքի (մատակարարումը) տրամադրումը կատարվում է ,,Արմաշ ԱԿ,,-ի դեղատոմսը ներկայացրած անձին *առնվազը 2(երկու) օրվա ընթացքում*

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն ՓԲԸ ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ, Մ. Նիկողոսյան 12 093909214 Հայբիզնեսբանկ ՓԲԸ Արարատի մ/ճ 11500604222600 ՀՎՀՀ 04101356 Տնօրեն՝ Լ. Հայրիյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	ԱՁ <<Մարինե Խաչատրյան>> ՀՀ, Արարատի մարզ, գ. Արմաշ, ՎՏԲ Հայաստան բանկ,,ՓԲԸ Արտաշատի մ/ճ Հ/Հ 16010020904000 ՀՎՀՀ 46440361 Տնօրեն՝ Մ. Խաչատրյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ